

Փաստ. անվանումը	Կրթական ծրագրերի մշակման և մշտադիտարկման կարգ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԾՄ-07-01
Հաստատման ամսաթիվը	11/07/2014
Արձանագրության N	
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Մշակող	Որակի ապահովման կենտրոն
Ներդրման/իրականացման պատասխանատու	Ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր



Փաստաթղթի փոփոխությունները

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, Ստորագրություն
16/05/2016	Ավելացվել են 12 և 13 կետերը	Սուրեն Օհանյան, ԼՍՀ Գիտական ինժեռինգի նախագահ




Ընթացակարգի նպատակը

Տվյալ ընթացակարգը սահմանում և կանոնակարգում է նոր կրթական ծրագրերի զարգացման և մշտադիտարկման, ինչպես նաև գործող կրթական ծրագրերի կատարելագործման և որակի ապահովման գործընթացը: Կրթական ծրագիրը դասընթացների ամբողջությունն է, որի արդյունքում ուսանողը ստանում է որակավորում և համապատասխան դիպլոմ:

Կրթական ծրագրերի զարգացման և մշտադիտարկման ընթացակարգ

Կրթական ծրագրերի զարգացման, մշտադիտարկման և վերանայման գործընթացը ներառում է հետևյալ փուլերը.



1. Շուկայի ուսումնասիրություն և շուկայավարություն

Շուկայի ուսումնասիրությունը ներառում է հետևյալ փուլերը.

- Հետազոտության խնդրի ձևակերպում
- Մեթոդաբանության հստակեցում
- Տվյալների հավաքագրման մեթոդների հստակեցում
- Ընտրանքի որոշում
- Տվյալների հավաքագրում
- Վերլուծություն
- Հաշվետվության պատրաստում

2. Ծրագրի հայեցակարգի մշակում

Ծրագրի հայեցակարգը ներառում է.

- Ծրագրի նպատակները
- Շուկայի ուսումնասիրության արդյունքները և եզրակացությունները

- Ծրագրի համապատասխանությունը ԵՄՀ առաքելությանը և ռազմավարական պլանին
- Ծրագրի համապատասխանությունը Հայաստանի, եվրոպական և համաշխարհային աշխատաշուկաների պահանջներին

3. Ծրագրի հայեցակարգի ներկայացում

Ծրագրի հայեցակարգը ներկայացվում է ԵՄՀ գիտական խորհրդի նիստում և անհրաժեշտության դեպքում հրավիրվում է արտահերթ նիստ:

4. Հաստատում

Հայեցակարգի հաստատման դեպքում ներկայացնողը շարունակում է գործընթացի հաջորդ փուլերի իրականացումը: Գիտական խորհուրդը կարող է նաև որոշում կայացնել մերժելու հայեցակարգը և ծրագրի ներդրումը:

4.1. առաջարկելով վերամշակել և նորից ծրագրի ներկայացնել հաստատման,

4.2. կասեցնել ծրագրի մշակման հետ կապված հետագա աշխատանքները՝ նպատակահարմար չգտնելով ծախսել ռեսուրսներ:

5. Ծրագրի նախատիպի մշակում

Հաստատման դեպքում ԵՄՀ կրթական ծրագրերի մշակման հաստատված ձևաչափով (Հավելված 1 և 2) մշակվում է կրթական ծրագրի նախատիպը (ամբողջ փաթեթը՝ ներառյալ առարկայական ծրագրերը): Նախատիպի մշակման ընթացքում իրականացվում է մոդելային օրինակների ուսումնասիրություն (բենչմարքինգ): Բենչմարքինգ իրականացվում է հիմք ընդունելով Որակավորումների ազգային շրջանակը, պետական չափորոշիչները, աշխատաշուկայի պահանջները, արտերկրյա համագործակից բուհերի, այլ երկրների մասնագիտական որակավորումների շրջանակները, մասնագիտական միությունների, ասոցացիաների կողմից մշակված վերջնարդյունքները՝ ըստ նպատակահարմարության և ընտրված մեթոդաբանության:

6. ԿԾ նախատիպի ներկայացում

Մշակված ծրագիրը ներկայացվում է ԵՄՀ գիտական խորհրդին: Գիտական խորհրդի նիստից առնվազն 20 օր առաջ գիտական խորհրդի անդամներին ուղարկվում է ծրագրի փաթեթի էլեկտրոնային տարբերակը:

7. Հաստատում

Գիտական խորհրդի կողմից ներկայացված ծրագրի նախատիպը հաստատվում է, կամ ներկայացվում են առաջարկներ վերամշակման համար:

8. Լիցենզավորում և հավատարմագրում


ԵՄՀ գիտական խորհրդի կողմից վերջնական հաստատում ստացած կրթական ծրագրի փաթեթը ներկայացվում է ՀՀ Կրթության և գիտության նախարարություն՝ ծրագրի իրականացման համար լիցենզիա ստանալու և Մասնագիտական կրթության որակի ապահովման կենտրոն՝ հավատարմագրման համար, եթե մշակված ծրագիրը նախատեսում է առանձին մասնագիտություն: Մասնագիտացման դեպքում ԵՄՀ գիտական խորհրդի հաստատումից հետո ամբիոնը կարող է իրականացնել ծրագիրը՝ առանց լիցենզավորելու և հավատարմագրելու՝ գործող մասնագիտության շրջանակներում:

9. Ծրագրի իրականացում

Վերոհիշյալ բոլոր գործընթացների պատշաճ իրականացման դեպքում ծրագրի ղեկավարը ստանում է հանձնարարական հավաքագրելու ծրագրով նախատեսված անհրաժեշտ մարդկային ռեսուրսները, ապահովելու այլ նյութական ռեսուրսների հասանելիությունը և ապահովելու ներդրումը:

10. Մշտադիտարկում

Նոր, ինչպես նաև գործող կրթական ծրագրերի մշտադիտարկման գործընթացները համընկնում են և իրականացվում են ԵՄՀ Որակի ապահովման ձեռնարկի հիման վրա: Մշտադիտարկման գործընթացը ներառում է հետևյալ փուլերը:



Մեկնաբանություններ

1. Ընթացիկ ուսումնասիրություններ

Ընթացիկ ուսումնասիրություններն իրականացվում են ԵՄՀ ՈԱ կենտրոնի և ամբիոնային ՈԱ գործակալների կողմից: Ուսումնասիրությունների ուղղություններն են.

- Ներքին շահակիցների բավարարվածությունը կրթական ծրագրերից (կրթական բովանդակություն, **ուսուցման և ուսումնառության մեթոդներ**, գնահատման մեթոդումներ, պրեֆոսորադասախոսական կազմի մասնագիտական պատրաստվածություն, խորհրդատվություն),
- Ներքին շահակիցների բավարարվածությունը կրթական միջավայրից (ընդհանուր հարմարավետություն, տեխնիկական բազա, ուսումնամեթոդական գրականություն, էլեկտրոնային միջավայրեր),
- Ներքին շահակիցների բավարարվածությունը օժանդակ ծառայություններից (տպագրության և պատճենահանմա, սննդի ծառայություններ)
- Արտաքին շահակիցների բավարարվածությունը ԵՄՀ ծառայություններից (հարցումներ գործատուների, շրջանավարտների և այլ շահառուների շրջանակներում)

Ուսումնասիրությունների մեթոդները տարբերվում են, ըստ նպատակահարմարության և կարող են ներառել ինչպես քանակական, այնպես էլ որակական մեթոդներ:

Քանակական մեթոդները հիմնականում ներառում են ուղղորդված հարցաթերթերի լրացումը (դեմ առ դեմ, հեռախոսային, էլեկտրոնային և այլն): Որակական հետազոտությունները կարող են իրականացվել խորքային հարցազրույցների, ֆոկուս խմբերի, գործընթացի մասնակիցների դիտարկումների (Participant observation, օրինակ

դասալսումներ):, փաստաթղթերի ուսումնասիրության և վերլուծության, փաստաթղթերի էքսպերտիզայի (փորձագիտական կարծիքի հանձնման) և այլ մեթոդներով:

Իրականացված ընթացիկ հետազոտությունների արդյունքները ներկայացվում են կառավարման մարմիններին և ռեկտորի անմիջական հանձնարարականով կազմվում են բարելավման ծրագրեր համապատասխան ստորաբաժանումների կողմից:

2. Տարեկան

աուդիտի իրականացման նպատակով ռեկտորի հրամանով կազմվում է աշխատանքային խումբ: Աուդիտի իրականացման հիմքերն են հաստատված քաղաքականությունները, կարգերն ու կանոնակարգերը, գործընթացները, ԵՄՀ գործողությունների ծրագիրը, հաստատված ԵՄՀ չափորոշիչներն ու չափանիշները, ինչպես նաև ՈԱԱԿ-ի արտաքին հավատարմագրման չափանիշներն ու չափորոշիչները: Ուդիտի աշխատանքային խումբը ներկայացնում է հաշվետվություն և վերլուծություն կառավարման մարմիններին և համապատասխան որոշման, հրամանի հիման վրա կազմվում են բարելավման գործողության ծրագրեր:

3. Երկարաժամկետ

Երկարաժամկետ մշտադիտարկումն իրականացվում է հիմք ընդունելով արտաքին հավատարմագրման համար առկա չափանիշներն ու չափորոշիչները և իրականացվում են քառամյա կամ հնգամյա կտրվածքով՝ կախված արտաքին հավատարմագրող կազմակերպության (ՈԱԱԿ) պահանջների:

11. Վերանայում

Ընթացիկ, տարեկան և երկարաժամկետ մշտադիտարկման արդյունքների հիման վրա կազմվում է բարելավմանն ուղղված գործողության պլաններ, որոնց իրականացումը վերահսկվում է համալսարանի Ռեկտորի կողմից:

12. Դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման ընթացակարգը

ԵՄՀ կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ նյութերի և ռեսուրսների /այդ թվում՝ գրականություն, գույք, տեխնիկա, լսարանային պարագաներ և այլն/ համալրման համար հիմք են հանդիսանում.


- ուսանողների կողմից ՈԱ կենտրոնի իրականացման հարցումների և հետազոտությունների ընթացքում վերհանված առաջարկները,
- դասախոսների կողմից առարկայական ծրագրերում նշված ռեսուրսները,
- մասնագիտության կրթական ծրագրում նշված ռեսուրսները,
- կրթական ծրագրի պատասխանատուի կամ ամբիոնի վարիչի կողմից ներկայացված ընթացիկ պահանջները,
- կրթական ծրագրերի իրականացման մասնակից բոլոր շահառուների առաջարկները. լրացվում է պահանջագիր և կազմակերպվում է գնումը՝ ըստ ԵՄՀ Գնումների կազմակերպման ընթացակարգի:

13. Բենչմարքինգի իրականացման մեթոդաբանություն

Բենչմարքինգը շարունակական և համակարգված գործընթաց է, որը գնահատում և համեմատում է մի կազմակերպության գործունեությունը մեկ այլի կազմակերպության հետ՝ շեշտը դնելով ներքին գործընթացների, գործառնությունների և գործողությունների վրա: Բենչմարքինգի նպատակն է գործընթացի պատասխանատու կազմին ներկայացնել այն արտաքին չափանիշները, որոնք գնահատում և որոշում են ներքին գործողությունների որակը և արժեքը՝

օգնելով հստակեցնել, թե որտեղ կարող ենք փնտրել բարելավման հնարավորություններ: Վերլուծության համար համապատասխան գործընթացն ընտրելուց հետո /բենչմարքինգի համար ընտրված գործընթացը, թեման հաստատվում է ԵՄՀ Գիտական խորհրդի կողմից/ ընտրվում է բենչմարքինգի ոլորտում փորձառություն և գիտելիք ունեցող համապատասխան անձնակազմ կամ պատասխանատու՝ հետազոտությունն իրականացնելու համար:

ԵՄՀ բենչմարքինգի իրականացման գործընթացը



Ըստ վերոնշյալ գծապատկերի՝ բենչմարքինգի գործընթացը բաժանվում է երեք փուլերի՝

Առաջին փուլ. Բենչմարքինգի նախագծի պլանավորում

- Բենչմարքինգի նպատակների և/կամ փոփոխականների սահմանում
- Տվյալների հավաքագրման մեթոդների և աղբյուրների ընտրություն

Երկրորդ փուլ. Լավագույն փորձի որոնում (համագործակից համալսարանի ներկայացում)

- Տարբերակվում են պոտենցիալ համագործակից համալսարանները
- Համագործակից համալսարանի ընտրություն և կապի հաստատում

Երրորդ փուլ. Տվյալների հավաքագրում և վերլուծություն

- Հավաքագրվում է այն ամբողջ ներքին տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է համալսարանի կատարողականությունը գնահատելու համար
- ԵՄՀ փորձը համադրվում է համագործակից համալսարանի փորձի հետ, տեղայնացվում է լավագույն փորձը